ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի օգոստոսի 06-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 04.08.2024թ.-ին ստացված հարցադրման և դրա վերաբերյալ 06.08.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Հարգելի Գործընկերներ, Չկայացած N ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19 ծածկագրով մրցույթի շրջանակներում մատակարար ընկերության պարզապանման հարցմանը՝ թե ինչով է հիմնավորված QLC տեսակի SSD-ների պահանջը, ձեր կողմից տրվել էր անորոշ պատասխան, որ հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/19» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված է գնվելիք ապրանքների այնպիսի չափորոշիչներով տեխնիկական բնութագիր, որը համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»: Պատասխանից հասկանալի չէ, թե որն է այն պահանջը՝ որին բավարարում է QLC տեսակի 1 x SSD 512GB, M.2 2280, PCIe Gen3 հիշողության կրիչը, սակայն չի կարող բավարարել TLC կամ MLC տեսակի հիշողության կրիչը նշված կոնկրետ հիշողության ծավալի պարագայում: Հաշվի առնելով վերոնշյալը, խնդրում եմ հնարավորինս մանրամասն տեխնիկապես հիմնավորված նկարագրել այն համարժեք կարիքները, որի բավարարման նպատակով պահանջվում է կոնկրետ QLC տեսակի հիշողության կրիչ: Ակնկալում ենք Ձեր պատասխանը հնարավորինս սեղմ ժամկետներում:»:

<u>Պարզաբանում</u>

«Պետական գնման գործնթացի կազմակերպման բոլոր դեպքերում Պատվիրատուն ինքն է գնահատում իր կարիքները, որին համապատասխան սահմանվում են գնման առարկայի բնութագրերը: Տվյալ դեպքում Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված է գնվելիք ապրանքների այնպիսի չափորոշիչներով տեխնիկական բնութագիր, որը համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: